

րանս շինեք, եւ եւ զկէսս տունս դաշտանաց աղտեղութեան շինեք. եւ յարծաթոյ զկէսս ըմպելիս կազմեք, եւ զկէսս անաւթս աղտեղութեան կազմեք: 19 Զրով՝ աստուածոցն զարջառս եւ զոչխարս խորովեք եւ եփեք, եւ ջրով՝ զդաշտանս եւ զթարախս եւ զաղբս լուանայք, եւ զկէսն առանձինն եւ կամ խառնեալ¹ ընդ գինի՝ ըմպեք, եւ ոչ զարհուրիք եւ սոսկայք: 20 Եւ զի՞ եւս մի ըստ միոցե՞ 2 հարկաւորիցիմք ասել եւ կամ թուել զանգագայութիւնդ ձեր. զոր արթուն եւ քաջ նահատակն Վարդան եւ նոցունց նմանիքն, որք ոչ կարացեալք այսպիսի խաբէութեան ծառայել՝ բողոքէին ձեզ հանապազաւր, թէ սուտ են պաշտամունքդ ձեր եւ անմտաց վարդապետութիւնք, եւ չլսէիք. զի բռնութիւնք՝ զիրաւունս ոչ տան ճանաչել, որպէս եւ այժմ: 21 Յաղագս որոյ ոչ հանդուրժեալք՝ ետուն զանձինս իւրեանց ի մահ եւ պսակեցան, որոց եւ մեք քաջալերիչք էաք եւ արդարեւ ճշմարիտ վարդապետք նոցա»:

22 Եւ ասացեալ զայս ամենայն սրբոյ առն Աստուծոյ Ղեւոնդի՝ որպէս ընդ մի բերան գովեցին սուրբ քահանայքն մեծաձայն բարբառով եւ ուրախ եղեն յով: 23 Եւ լուեալ զմեծաբարբառ գովութիւն սրբոցն, եւ զբերկրումն երեսաց նոցա տեսեալ անաւրեն Միհրնեստեհի եւ այլ աւագանւոյն Արեաց, որ նստէին առաջի նորա՝ ի ցասումն բարկութեան եղեալ, ասէ ցնոսա. «Ոչ հրամայեն մեզ արեւնքն մեր ցասնուլ ումեք, մինչ չեւ ինչ լուեալ ի բերանոյ նորա. արդ՝ զուարթացեալս իմս տեսաք զձեզ ընդ խաւսս աշխարհակորուսիդ այդորիկ, զորոյ քաջ տեղեկացեալ լուեալ է մեր զամենայն գործս եւ զկախարդասար վարդապետութիւն դորա, որով կորոյս զպիտանի այրն զքաջն Վարդան եւ զընկերս նորին. ըստ որոյ արժանի պատրաստեալ պահին³ դմա չարաչար հատուցմունք եւ մահք: 24 Բայց դուք գիտել տուք մեզ, թէ եւ ձեր նո՞յն բանք են⁴, զոր մահապարտդ այդ իշխեաց աներկիւղ համարձակութեամբ յանդգնել եւ խաւսել առաջի մեր»:

25 Եւ սուրբն Յովսէփ եւ սուրբն Սահակ⁵ ետուն պատասխանի եւ ասեն. «Չամենայն բանսդ եւ զպատասխանիսդ, զոր ըստ արժանի իւրոյ սրբութեանդ արար, Աստուծոյ աւգնականութեամբն քաջալերեալ, եւ խաւսեցաւ ընդ ձեզ տերդ Ղեւոնդ՝ ի յերկար ժամանակաց բազում անգամ զմտաւ ածեալ հասարակաց մեր ամենեցուն, զոր այսաւր դա ըստ իւր աստուածաշնորհ գիտութեանդ գեղեցկապէս յաւրինեալ կարգեաց առաջի ձեր՝ խորհեալ էր մեր եւ խաւսեալ. որք ի դոյն միտս ամենեքեան եւ ի դոյն կամս ամենեքեան կամակիցք եմք, եւ խնդրեմք զի արժանի լիցուք վճարիլ ի դմին:

1 2. խառնել

2 2SS. մի եւս մի ըստ միոցե. այսպէս ըստ Ն. Բ.

3 2ԱԲտ. պատրաստեալ պատահին. այսպէս ըստ ուղղագրութեան Գտ. (ըստ Ն. Բ.)

4 2. ձերոյն բանք են

5 SS. սուրբն Իսահակ